

ԱՆԱԾԻՏ

Հ Ա Ն Գ Ի Է Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Ազգային, Գրական, Գեղարուեստական

Թ. ՏԱՐԻ 1907

ՄԱՐՏ-ԱՊՐԷԼ-ՄԱՅԻՍ

Թիւ 3-4-5

Նարեկացւոյ վերագրուած

Տ Ա Ղ Ե Ր Ը



ն խուճի մը տաղերը որոնք Վենետիկի Միտի-թարեանց «Մատենադրութիւն» Գրիգոր Նարեկացւոյ» հատորին մէջ մտած են իբր գործ Նարեկացւոյ, ոճի եւ լճուճի այնպիսի

խոշոր տարբերութիւններ կը ներկայացնեն Նարեկացւոյն բուն գործերուն հետ, որ ինծի շատ զժուար կը թուի(1) զանոնք վերագրել Նարեկացւոյն (եւ այս նկատողութիւնը կ'ընեմ ոչ միայն այն տաղերուն համար որ կը գտնուին Վենետիկ լոյս տեսած հատորին մէջ, այլ եւ

(1) Ամսիտի 1905 թ. 41 թիւին մէջ այս մտին ակնարկութիւն մը ըրած էի, բայց անուշադրութեամբ ո գտնւած գրած էի փոխանակ ուտող ի . ին նկատողութիւնս տաղերուն վրայ էր : Հ. Պատուրեան՝ այդ առթիւ՝ յայտնեց կարծիք մը թէ Նարեկացիի վերագրուած ո գտնւած յերն ալ իբր չեն, այլ ուրիշ բանաստեղծի մը որ նոյնպէս Գրիգոր կը կոչուէր :

անոնց որ Ֆազնավէպին մէջ կամ այլուր տըղուած են իբր գործ Նարեկացւոյ :

Նախ՝ այդ տաղերը իրենք իրենց մէջ ունին ներշնչման ու մանաւանդ լեզուի ու ոճի անպակն տարբերութիւններ, եւ չեն կրնար միեւնոյն նեղխափին գործն ըլլալ : Առէք, օրինակի համար, Վենետիկի հասարին չորրորդ տաղը .

Գունդր սուրբ վկայիցն ի սուկալի պատերազմին, Հանդիսաւորեալ հասին ի գլուխ ասպարիսին, եւն.

Կարգացէք՝ օնմիջապէս յետոյ՝ վեցերորդ տաղը .

Ի նոյն նորոյ նորին ր նոյն ր նիւթ, Նիւթէականին էն յամէից գոյ, եւն.

կամ տասներկուերորդը .

Էն էին անէին եղանի եղակ եղելի՝ Անեկիցն աներբից յաւիտեանս Անհաս իմանի անկէա այժմուս հասու .

Տարբերութիւնը բացարձակ է, մին ազնիւ հայերէն, ներգաշնակ ու կատարեալ օճ, հանդարտ ու պայծառ ներշնչում . միւս երկու կըտորները (որոնք նման գեւա ուրիշներ ալ կան) շարքին մէջ) օտարախորթ անձաշակ հայերէն, նրբամուլ բառախաղաղկան հսկողութիւն՝ միւրթ սիրտով, իսկ կան ալ կատարներ, որ

կը տարբերին այս երկու շարքէն միանգամայն, եւ կը մտնան ժողովրդական բանաստեղծութեան, ինչպէս՝ օրինակի համար՝ հետեւեալը .

Հաւուն հաւուն յարկնայցիս,
Դիտելով զհեթանոսս .
Ձայնէր ձայնէր տատրակին
Սիրամունդ սիրելոյն . Բուն:

Իսկ բազմատուրով այդ բոլոր տաղերը՝ նա-
րեկացւոյ իսկական գործերուն հետ, ոչ մէկ
նմանութիւն, ոչ մէկ խնամութիւն չեմ գտներ.
միայն երրորդ տաղը, երգ Երգոյին քանի մը
կտորներու պարզ տաղաչափում, հինգերորդը
(« Գունդ սուրբ վկայիցն ») որուն տաղածայ-
րերը « Դրիգոր » անունը կը կապեն, տասներ-
կուներորդը՝ (Համբարձման եւ տասնեւչորսորդ-
ըը, « Երկնք ի յերկիրս եւ երկիրս ի յերկն-
քըն », կրնան՝ մինչև աստիճան մը՝ վերստուիլ
Նարեկացւոյն :

Ձեմ գրտեր թէ ձեռագիրները որ կը պա-
րունակեն այդ կտորները, իբր անոնց հեղինակ
միշտ Նարեկացին կը յիշեն . չեմ կարծեր, եւ
անձամբ տեսած եմ այդ կտորներէն ոմանք, ձե-
ռագիրներու մէջ, առանց հեղինակի անուան .
« Տաղ եկեղեցւոյ եւ ի տաճարն սուրբ »ը զոր
Բագնակիս հրատարակած է ասեմով, հեղինակի
անուն չունի, Բագնակիս խմբագրութիւնն է
որ « վերագրած » է զայն Նարեկացւոյն :

Իսկ կան Նարեկացւոյն վերագրուած այդ
տաղերուն մէջէն այնպիսիներ, զոր տեսած եմ
ձեռագիրներու մէջ ուրիշ հեղինակի անունով .
այսպէս վենետիկ հատորին չորրորդ տաղը,
« Աւետիս մեծ խորհրդոյ, խորհուրդ ծածկեալ
մեզ յայտնեցաւ », գտայ Փարիզի Մատենադա-
րանին թիւ 21 ձեռագրին մէջ, հետեւեալ վեր-
տառութեամբ՝ « Տեսան Ներսէսի Հայոց կաթո-
ղիկոսի(1) տաղեալ Ջորոնէից սուրբն ». եւ
այդ տաղէն անմիջապէս յետոյ կուգայ նոյն ձե-
ռագրին մէջ՝ « Այլ տաղ նմին » վերնագրով
գրութեամբ մը՝ « Անձառելի եւ անհաս բնու-
թեամբն Աստուծոյ լոռնն մարմնով » ու քանի
մը էջ անդին՝ « Նոր եղեմ բանաւոր անկոյն »
տաղը որ հրատարակուած է Շնորհալիի բանաս-
տեղութեանց Վենետիկեան ճառագրածուին մէջ :

Դարձեալ, « Հաւիկ մի տեսայ » տաղը, զոր տ-
եսանք կը վերագրեն Նարեկացւոյն . թէպէս չի
գտնուիր Վենետիկ հատորին մէջ, եւ զայն գը-
տած եմ վենետիկի թիւ 555 տաղարանին մէջ
հետեւեալ վերատառութեամբ, « Տաղ Արիստա-
գէսի » :

Այս անգամ կը լուծելու համար՝ ունհրա-
ծելու է ուրեմն բոլոր ձեռագիրներուն մէջ փն-
տել այդ տաղերն եւ անոնց տրուած հեղինակի
անունները, եւ բազմատական քննութեամբ մը
որոշ եզրակացութեանց հասնիլ . հաւանական
է որ Նարեկացիի վերագրուած այդ տաղերն
չատ քիչը կարելի պիտի լլլայ այն ատեն Նա-
րեկացիին համարիլ . եւ Նորիկ երգչին տեղ՝
մէջէլ աւելի բանաստեղծուր երևանս սլտիմ քան
իբր հեղինակ այդ խորհրդաւոր կտորներուն :

Ինծի համար, ո՞նի եւ լեզուի տարբերու-
թիւնը բաւական է տարակոյսի տակ դնելու
համար այդ տաղերուն վերագրելութեանը Նա-
րեկացւոյն, Նարեկացւոյն ո՞ր կնճռոտ է, բազ-
մակուտակ, գերագոյն նրբութեան հետամուտ,
բայց ոչ « Հաւեկ » ին կամ « Սայլն այն ի՞նչ
նէր » յի նման կտորներուն միամիտ ու պարզուկ
ժողովրդականութիւնն ունի, ոչ ալ « Ի նոյն
նորոյ նորին ը նոյն ը նիթ » յի պէս տաղերուն
աւելած անային ու քիչ մը իմաստակ նկարա-
գիրը եւ անձունի յեզուն : Բագմամուտ, խո-
րագաց, լայնասուն գրագէտն է Նարեկացին,
որուն մտածումը յոր է ու բարդ — երբէ՛ք
միամիտ, ո՛չ մէկ կապ ժողովրդական երկրոր
հետ, — բայց ե՛ իր ամենն խճողուած խորթ-
նութեան մէջ՝ երբէ՛ք անիմաստ, տամալաքարը
ու անհասկանալի . իր մտածմանն ու իր ար-
ուեստին լիակատար տիրապետութիւնն ունեցող
մտանայցիք մին է, որ ամենն բազային խո-
կուներուն մէջ իսկ տրամաբանութեան թելը,
ճաշակի լոյսը չի կորսնցնիր, քերականութիւնը,
համաձայնութիւնը, Ֆրասիկներութիւնը՝ իր մտ
կնիթմարիտին բուռն յանդգնութեան մը բոլոր
խաղերուն, բայց արուեստագէտը՝ իր ամենէն
խիղախ տարօրինակութեանց մէջ՝ երբէք չի
զիջանիր մինչեւ հանելուկի մը տղայական
կնճռոտութեան իջնել, ոչ ալ լոկ բառակոն
կուտակումներու կամ բառախաղութեանց ըզ-
բասանքին պզտիկալ . իր լեզուն հետու է ու-
կեցարեան մաքուր ու պայծառ գրաբարն ըլլա-

(1) Ներսէս Շնորհալի :

լէ . Ղըուտ ու շարձարուած , գայարուած ու մտայ լեզու մըն է , բայց եւ միշտ կը մնայ հոյակապօրէն ազնիւ հայերէն , հարուստ , վա-
 յեյուշ , ներդաշնակ , բղխած լուս հոյ տղբիւրէ ,
 օտար ազգեցութիւններէ առնելով այնքան մի-
 այն որքան պէտք է , անհրաժեշտ է նոյն իսկ
 մերթ՝ ճօխացնելու համար բնիկ յեղուն . սպ-
 թեզուն այնքան դեղեղնիկ է՝ թէպէտ տարբեր
 գեղեցկութեամբ՝ որքան ոսկեղարեան հայերէ-
 նը , Անա՛՛ օրինակի համար , Աստքելոց ներքո-
 ղին առաջին հատուածը .

« Տիեզերաց ծաղիկք եւ տունկք տեղւս
 լիք տունք եդիմայ , Աւամայ նախաստեղծին
 ծնունդք , եւ զարմք Սիովնի . ծուրք ամբար-
 ծուղէշք բիրտստեանք , ճիրանածայր ըն-
 ծիւղք , երփնագեղք քաղցրապտուղք եւ ա-
 խորժեկիք . երկնընթացք դիսակք ընտրու-
 թեան , լուսա տունկք եւ տիրահաստատք , շա-
 փաւէտք եւ արդիւնակամք , առագայտք եւ ար-
 մատացեալք , պարարեալք եւ պանծացեալք
 ի ցողոյ պարգեւողին . ընտրակա՛ սերմանք
 աճման բարեոյս անդատանին՝ Բիլխունք
 հանապազահոսք , մշտակայլակք յարակա
 յընթացք . գետք հանդարտսհետք կերածա-
 ւալք եւ գերածիճալք , գարնանագուշակք ,
 սառնական օդոցն սուզիշք , եւ դժուրակախիք
 շիջոյն նիհանիչք եւ ապաքինիչք , սուրք եւ
 երջանկագունդ գումար դասու Առաքելոց ,
 եւն : »

Եւ ա՛ն կտոր մը « Ողբերգութեանց Մա-
 սեան »-ն .

« Եւ արդ ընկղծեալ զմայելեալ եւ ի սպառ
 ծածկեալ ի յանձառուութեան առաւելութեան
 քազմամ սնեաց յաճախութեան մեծիդ երախ-
 տացք որ ամենառատ լրմամբ աննուագելեալ
 յայժմէ եւ յայժեկէ՛ ի դիմաց եւ ի թիկունց համ-
 բարեալ կան անբաւութիւնք , մատուցանեմ
 ընծայեմ՝ ատամնօր աւանդ գովեստի դաւան-
 ման Յշմարտականի . զի որպէս երբեմն հեր-
 ձուածականին չարափառութեամբ ամենա-
 պատիրն խաբէութեամբ նենգողին կարծիւն
 հատուածեալ ի բաց հիբքեցայ՝ ելեալ ի դրախ-
 տէն , արդ միաւորականաւս այսու ուղիւ ան-
 բժուութեամբ՝ ի յաւանդ իսկապէս շնորհի ան-
 դրէն միւսանգամ համբարծեալ սովիմբ՝ ի

Թուից Թեոսց՝ Դուսոյ ան : յերկինս ժամանե-
 ցից հետեւեալ : »

Ի՛նչպէս կարելի է ընդունիլ որ այս հոյա-
 կապ տողերուն հեղինակը դրած՝ բոլոր նաեւ
 սապէս սողեր :

...Տաւիղ եռաստուիչ բամբուրգայնոյ տաւիղ,
 ճաւիղ ալըծիւ երգ գալիխազուարճից ,
 Ջուարձ գարնանաբոյս նոր Սիովնի ընծայ,
 Բնծայ երկնայնոյ իսիտ սիրամայր պատգամ .

կամ

Դուրն յոչէից եղաւորեալ տիպ ,
 Տիպ երանութեան նեց ընդունակ ներ ,
 Ներ ներբողական նուաստատիպ կերպ ,
 Կերպ երամաղին եւ ցուցանի շուք .
 Տուք տարբաշըշոյ զեղ մէջ ստոյ զկէտ ,
 Կէտ կատարելոց կցարդակցեալ եւ էակցեալ
 մէտ ,
 Մէտ տաղերամին ձայնաստեղծեալ երբայա-
 կան տղայք , . .
 . . . Փառքք բազմերոյն վերայ իշոյ
 Ենորթագարդեալ գերափառեալ մարուկ .
 Մտրուկ հանդերձ իշովն ի սաբաւօմ զօրե-
 լոյնք բան ,
 Բանըն շնորհաւէտ կառավարեան լեռնա-
 Թափեան յերուսաղէմ գայր :

Այս կարգի տողերուն մէջէն՝ զուրի ճա-
 թեցնելով՝ կարելի է իմաստ մը հանել , եւ տեղ
 տեղ՝ նուր բնաստ . բայց նայե՛րհն չե՛ այս լե-
 զուն , եւ՝ նարեկացիի լեզուն ոչ ալ ոճը չէ
 բնաւ կրթէ :

*

Աստ՛ք ըսելէ յետոյ՝ կ'ուզեմ հիմայ համա-
 րօտակի քննել այդ սաղերու շարքը՝ ի՛նք ի՛ր
 մէջ : Նարեկացիին վերագրելի չըլլալով՝ ըստ
 իս , այդ շարքը հեռու է անշահեկան ըլլալէ :
 Ընդհակառակն , միւր չին բանաստեղծութեան
 ամենէն թանկուղին մէկ փուռնը կը կազմեն
 ատանք , եւ արժանի են խորին ուսումնասի-
 բութեան :

Ի՛նչպէս նկատել տուի արդէն վերեւ , այդ

տաղերը երեք տարր կը պարունակեն՝ իրարմէ տարբեր . տաղեր որ մեր ՚ին զրականութեան միջին շրջանին կրօնական լուսազոյն քերթել-ւածներուն ոճն ու լեզուն ունին , կանոնաւոր շարադրութիւն , կսկիկ եւ հարազատ հայերէն . տաղեր որ ժողովրդական բանաստեղծութեան զրոյժ ունին . եւ տաղեր որ մեր նախնեաց զրականութեան « ածքանութեան » բաժինն են :

Առաջին տեսակի տաղերէն այն որ կը սկսի « Երկինք ի յերկիր » տողով , իմաստանո՞ւ ու պերճաձև . քերթուած մըն է , խորհրդաւոր ու յանդուգն պատկերներով , հակերճ ու խիտ աճով , բարձր ներշնչմամբ .

Երկին նոր երկին լոյս արվազարդեալ ,
Վերին աւետիքն ի յերկիր Եմաւային .
. . . Մաւալ Եով Եհիճազ քաղոր օղով շար-
Ժենայր ,
Եարժէր սաբայեան ի կղզիս կընդըրկի :

« Ահա եմ գեղեցիկ » տաղը « Երգ Երգոցոյին քանի մը տուններուն բառական ՚նտեսեղութիւն մըն է , ո եւ է ինքնաստպութենէ զուրկ .

« Գունդք սուրբ վկայիցն » տաղը վե՛ն զնացըով , ներգաշնակ ու մեծվայելուչ ոճով ներբող մըն է քառասուն մարտիրոսներուն . կան հոն ազեոր պատկերներ .

Աստեղք աշխարհի ի բարձրութեան երկնից տեսեալք :

« Համբարձման » տաղը աստուածարանահան քերթուած մըն է , ներշնչմամբ՝ նման այդ կարգի բազմաթիւ արձակ կամ ոտանաւոր էջերուն զոր մեր նախնիք մեղք թողած են , ոճը մեծ մասամբ եկեղեցական զրականութեան հասարակ-տեղիքներով յիշուած , քանի մը տեղ ինքնայատուկ փայլով մը շողուն :

Երկրորդ կարգի տաղերը որ ժողովրդական բանաստեղծութեան գրոյմը ունին , մեծապէս շահեկան են : Ասոնք են Թարութեան տաղը (Ասյլն այն իջանէր ի լեռնէն ի Մասեաց) , « Սո ձայն զտուժուռն ասեմ » , « Հաւուռն հաւուռն արթնացեալ » , « Գոհար վարդն վառ աւուալ » . ասոնց վրայ աւելցնելու է « Եկեղեցեոյ » տաղը եւ « Հաւիկ սը :

Գարզ , միամիտ , գունագեղ , թարմ , ա-

սոնք տարորինապէս կը յիշեցնեն ոչ միայն ռամկական անանուն երպրը , այլ եւ՝ ու մա-նաւանդ՝ Գողթան երպրու հասակոտորները . կը թուին տմենէն հարազատ շարունակութիւնն ըլլալ Երեսնոնեայ Հայաստանին մէջ՝ հին հեթանոս Հայաստանի ժողովրդական քնարին ներշնչման :

« Թարութեան » տաղը թերեւս ժողովրդական մանաղութիւն մըն է՝ բանաստեղծորէն ներկայացուած . սայլ մըն է որ կ'երեւայ Մասեաց լեռնէն իջնելով ,

Եւ ի վերայ նորս որդի արբայի ,
Եւ յաջմէ նորս վեցե՛ւական մերովբէքն
Եւ յափեկէ նորս բազմաշնայ քերովբէքն
Առաջի նորս մանկունք գեղեցիկ
Ի գլխիս նոցա խաչն տէրունական ,
Ի ձեռին նոցա սաղմուտարան եւ քնար,
Որք երգէին եւ ասէին՝
Փա՛ւք Քրիստոսի ամենազոր յարուեանն :

Հարիւր բարգ խոյրձան , հարիւր բարգ կորէնկան եւ մէկ գէջ մը մանուշակ զիգած են սայլին վրայ , բայց սայլը չի շարժիր .

Եւ ահա չշարժէր սայլիկն այն ,
Եւ ահա չխաղայր անինն այն .

Ու սիրուն , եզական , հրաշալի է այդ սայլը .

Եթէ սամիքն են արծաթի , լուծն էր ոսկի ,
Եւ ասմոսիքն տարիշիմի ,
Փոկեր շարած շարանման փոյլ մարգարիտ .

Յանկարծ մէկը , Նոր ու ճապուկ , ձայն կ'արձակէ , եւ սայլը կը շարժի .

Այն ցորուն ցո՛ճ էր եւ Յապուկ ,
Ուռաւիշակ փաստաբազուկ ,
Լայնաթիկունք . խաբսիշագեղ , հիեղագոչ ,
Նա ձայն ամէր եզլամոխի ,
Կանչուն ամուէր ամողակին ,
. . . Եւ ահա՛ շարժէր սայլիկն այն ,
Եւ ահա խաղայր անինն այն .

Սայլին կուրծքն իսկ լեզու կ'ելլէ եւ « ձայն կ'ածէ » եզնամոխի , ու սայլը կուգայ՝ արագաճայլ՝ կը հասնի մինչեւ Սրուսաղէմ .

Ի գիւ գայր ի գիւ սայլիկն ի գիւ .
 Ի Մասեաց յաջ կողմանէն ,
 Սայլիկն ի գիւ գայր ի գիւ ,
 Եւ Յունչալով գայր մտանէր յերուսաղէմ ,
 Եւ որդիք նոր Սիովնի նոր երգէիկն գայս
 ասելով .

Փա՛ռք Քրիստոսի , այսօր արձակեցաք :

Այս տարօրինակ սայլը խորհրդանշական է,
 եւ տաղերգուն կը բացատրէ զայն : Մովսէսի
 օրէ՛նքն է այդ սայլը . հարիւր բարդ խորձանք
 մարգարէներն են . վեց բարդ կորնկանը՝ Աս-
 տուծոյ վեցօրեայ դործն է . սին մանուշակոր
 Սրբորդութիւնն է . այս բոլոր չի բաւեր «քրիս-
 տոնեայ» ժողովրդական երգչին համար՝ որպէս զի
 սայլը քալէ ու հասնի Երուսաղէմ ու մարդկու-
 թիւնը ազատագրուի, պէտք է որ Յիսուսի գա-
 լուստն աւետող Յովհաննէսը (ճորտն ճահ եւ
 ճապուհ) ձայն բարձրացնէ, ու սայլին կուրծքը՝
 Աւետարանը՝ իր բարբառը լսելի բնէ (1) :

Նմանօրինակ ներշնչմամբ եւ արուեստով

(1) Բաղզասուլ այս բանասեղծութեան հետ աս
 փոքրիկ սիրուն տաղը, կրօնական օ տեսիլ օ մը զուտ ժո-
 ղովորական ներշնչմամբ ու ձեով , զօր օրինակած եմ Ս .
 Ղազարու Յիւ 3 խմբագրիչէն , և օրդէն Անահիթի մէջ
 հրատարակած եմ .

Պետոս երազ է սեսեր ,
 Ելեր պատմեր Պօղոսի -
 օ Ի նորսուցի այցիմ միջին
 Փոքրիկ հրման մի սեսի .
 Փոքրիկ հրմանիմ միջին
 Բարակ առուակ մի սեսի .
 Ի բարակ առուակ միջին
 Նոր բարուակ մի սեսի .
 Նոր բարուակիմ վերայ
 Ոսկի իրմնոր մի սեսի .
 Ոսկի իրմնորիմ վերայ
 Խայս աղաւնի մի սեսի : .

Պօղոս աւէ Պետոսի .
 օ Պետոս , երազ ի բարին .
 Նորսուցի այցիմ որ սեսեր ,
 Երուսաղէմ հաղան է .
 Փոքրիկ հրման որ սեսեր ,
 Սաղմոսի օսմանն է .
 Բարակ առուակ որ սեսեր ,
 Ասուածածին տուր կոյսն է .
 Նոր բարուակիմ որ սեսեր ,
 Յիսուս Քրիստոս որդին է .
 Խայս աղաւնիմ որ սեսեր ,
 Ազատակիւր հագին է : .

կտոր մըն է « Եկեղեցւոյ տաղը », զոր մեր հին
 բանաստեղծութեան ամենէն յատկանշականն, ա-
 մենէն հզօր ու հրապուրիչ էջերէն մին կրնանք
 համարիլ (այդ տաղը Անահիթի այս թիւին մէջ
 կ'արտասուպմ) :

Վարդավառի տաղը շացուցել փողփողում
 մըն է ծաղկավթիթ ու արեւափայլ պատկերնե-
 ռու , որոնց խորհրդանշանակաւն իժմասն ու
 կապակցութիւնը չէ բացատրուած տաղին մէջ ,
 բայց որոնք՝ հակառակ որ շատ դիւրահասկա-
 նալի չըլլան՝ զմայլանք մէջ կը ձգեն բացառ-
 րութեանց թարմութեամբ ու փայլով , տողե-
 րուն քաղցրանուազ թաւայմամբ , ներդաշնա-
 կութեամբը տաղաչափութեան (որ Քուչակի
 տաղաչափութիւնն է , 7—8, կամ ըստ Նորայր
 Բիւզանդացւոյ՝ 7—3—5) .

Չոհար վարդըն վառ առեալ ի վեհից վար-
 սիցն արփենից
 Ի վեր ի վերայ վարսից ծաւալէր ծաղիկ
 ծովային .

« Հաւիկ »ը փոքրիկ դոհար մըն է .

Հաւիկ մի պայծառ տեսի աննրման ,
 Ի յայն քառաթեւին վերայ աննրման :
 Աննրման , աննրման , աննրմանիդ ո՛վ նը-
 ման ,
 Դո՛ւ նրման :

Յուսւ արճաթափայլ ունէլ՝ աննրման ,
 Արեգական շողոյն նրման աննրման :
 Աննրման , եւն :

Ձայնիկն ողբորուկ ածէր աննրման ,
 Գարբիլիտան փողոյն նրման աննրման :
 Աննրման , եւն :

Ձայներն արտասուօց լընոյր աննրման ,
 Առաւօտեան զօղոյն նրման աննրման :

Բանաստեղծը՝ ըստ իս՝ այդ հաւտն պատ-
 կերով կը ներկայացնէ Յիսուսը , որ խաչին
 վրայ գամուած , կ'երգէ ու կուլայ , — ու ոչ
 մէկ պատկեր աւելի քնքոյչ է , աւելի գողար
 ու խորին , քան այս միամիտ ու շնորհայտ տե-
 սիլը սիրոյ Ասուածին որ ինքզինքը զօ՛ւ կը
 բերէ մարդկութեան :

Երբորդ կարգի տաղերուն վրայ չեմ ծանրանար, անոնց մասին վերեւ ըսած ըլլալով գրեթէ ամէն բան. յաճախ՝ աւելի նանկելուկ են անոնք քան բանաստեղծութիւն. բայց զուրկ չեն իսկական բանաստեղծութենէ. անոնց մէջ կայ հաս մը, որ արդէն հանրածանօթ է, եւ հրաշլիք մըն է, այն է՝ « Աչքն ծով ի ծով ծիծաղախիտ » տաղը. այս կտորը՝ աւելի ճիշդ խառնուրդ մըն է ժողովրդական բանաստեղծութեան եւ « տէրասան » ոճի. կան նոն զուս ժողովրդական տղերք .

Հիւսէր զելեւելն ընդ միմեանս .
 Հանդարտիկ իսղայր Յիկնեծեկն ճեմէր .
 Բերանն երկեթերթի, վարդն ի շրթանց կաթէր .
 . . . Ծոցն լուսափայլ կարմիր վարդով լըցեալ .
 Ծղիբըն ծիրանիք մանուշակի հոյլք .

կան եւ սապկա տղերք, որոնց մեծագոյն յատկութիւնը, աւա՛ղ, յատկութիւնը չէ :

Ցայտէն նունենի սարդիասունկ
 Փեղաշիտակ ծայրից ծաղկանց
 Ռոյ սիւնն ի սրտին իուսխայօրէն
 Կարկազայր սամբերունի սէր .
 . . . Ի ծամին խեղեփին հագրէ զի նոյն սէր .
 Հոգիազգեստեալ գեյն ի փնւոյն գոյն . . .

Այս կտորը Նարեկաւին վերագրուներէն ունաը կը կարծեն տեսնել ատոր մէջ գովքն Աստուածածինն, զոր Ողբերգութեանց Մատենային երգիչը կարծած է՝ ըստ աւանդութեան՝ որ մը տեսնել Աղթամարայ ծովուն վերեւ՝ Յիսուս մահուկը գիրկը . ոչ մէկ կերպով Աստուածածնայ հետ կրնայ նոյնացուիլ այս տաղին մէջ նախարգրուած ճակագրեաց, գեղանի ու կիսամերկ աղջիկը որ « ծով աչքը » ծիծաղախիտ ծովուն յառած « առիճաղ, պատճառ պտղի խաղի երգով(?) » կը պարե (« Ձեռացն եղիւոյ կամարակապ կապէր ու հանդարտիկ խաղայր »), աղ-որ աղջկան մը արեւակերպ շորոյն շքեղ տարփուռն է, եւ եթէ բանաստեղծը գէնօր կը նմանայէ կնդրկալից « թուրվառի » մը « հըրով աստուածայնով լըցեալ », եթէ տաղը

կ'ատարէ « այն թագուորին, այն նորածին փրկչին, զքեզ պակեղոյն փառք յարտեսանս » բաներով, ասկից ցոյց կուտայ միայն որ գրողը եկեղեցական մըն է, որ կանադի գեղեցկութեան մէջ աստուածային հոգւոյն մէկ յայտնութիւնը կը տեսնէ եւ կը փաստարե « երկնաւոր թագաւոր » այդ գեղեցկութիւնը « պակամ » այսինքն իր լիալիր կատարելութեամբ կերտած եւ երկրի պարզեւած ըլլալուն համար :

Այս տաղին քով կարելի է գնել « Ի գըլխատունն Յովհաննու Մկրտչին » տաղը (հրատարակուած Բազմալիպին մէջ իբր Նարեկացւոյ գործ) եւ ուր կը գտնենք միեւնոյն խառնուրդ ժողովրդական թարմ պակեղներու եւ խորգ լեզուք :

Նոյն կարգի միւս կտորներուն մէջ միութիւնը աւելի հոծ է, լեզուական այլանդակութիւնները (որայս վերոյիշեալ կրկու տագրուոն մէջ քիչ են՝ եւ աւելի տարբրինակութիւն են քան ադիտութիւն) կը վխտան, բառեր, օճանցութեանն ու բարգոյթիւնները՝ անճոռնի, ֆրագներուն շինուածքը արտասոց է յաճախ եւ նախագասութիւններուն կապը ատեճուածային, բայց եւ կան մերթ անոնց մէջ — թէպէտ շատ քիչ — քնարեղական նուրբ գեղեցկութեամբ հատուածներ .

. . . Ծաղիկ ծոցոյ ծոց հայրենի,
 Ամպոյ նըման իջեալ յերկնից,
 Ձուէր իւր ի մեզ բաղդիկ ցոյծեալ .
 Սէր ի յամպոյ, ամպ սիրաշարժ,
 Սըռոյն ցողեալ ի նոյն գեղման,
 Վայր իջուցեալ կախն անձրեաց . . . (Տաղ ծննդեան)

Դիտել սուր վերեւ թէ վննետիկ հատորին մէջ չորրորդ տաղը՝ (Յայտնութեան), փարեզի ձեռագրին մէջ որոշապէս կը յիշատակուի իբր գործ Ներսէս Ծնորդալիի Աչքէ անցուցի Ծնորդալիի քերթուածներու հուսաքածուն (տպուած վննետիկ), եւ նկատեցի որ խնդրոյ առարկայ եղած այս վերջին կարգի տաղերը՝ մեծ մասամբ՝ Ծնորդալիի լեզուին ու ոճին աւելի կը « մօտեսան » քան Նարեկացւոյն. Ծնորդալիի լեզուն՝ թէպէտ ընդհանրապէս հարազատ, մաքուր ու ճաշակուոր՝ յոյն-լատին ազդեցութե-

նէն զերծ չէ . . . և. մերթ նոյն իսկ չափէ աւելի անոր կ'ինթարկուի, — միայն թէ՛ միշտ յառաջ բերելով արդեւնք մը որ գեղեցիկ է .
 Ահա հատուածներ Շնորհալիւն .

Նոր երկինք յերկրի, արփույն պարունուլն,
 Ծագողին Ծագող,
 Երրակի ունուլ աւետեաց՝ ծայնիւ անմահից
 պետին .
 Բուպէլցն տիպ, համայնից հոգւոյ գուլով
 Արեւելք,
 Սրտի մաքրելոյ զժափանցիկ լուսոյն Ծագե-
 լով նըշոյլ՝
 Էին աննիւթի նիւթ պարունակեալ նիւթ-
 եալ առ իբէն . . .

(Բաղդասուլ այս կտորը՝ Նարեկացոյ վե-
 րագրուած « Երկինքն ի յերկիրս » տաղին հետ)

. . . Երկակի դիմառից տուիծ .
 Անքակ միութեամբ էին ընդերուսն .
 Բնական արփիւ առլըցեալ . . .

. . . Նոյնազոյ ընդ շոր Բանն Աստուած,
 Ի սկզբանն առ Աստուած միշտ էն,
 Էն անմարմին անյեղ յիղեալ
 Եւ քնակեաց ի մեզ բաժորէն . . .

... Ներպարունակեալ իննեակ դասուց կայք
 մի պռ մի ծայնիւ
 Երգս առեալ գոչին երբակի անծանց միոյ
 սէջուութեանն . . .

. . . Էն միշտ յէէն ծնեալ մարմնով ծընանի
 Ջոր քարոզք բանիս, Եւն:

Կան Շնորհալիի մէջ ուրիշ մէկ քանի կտոր-
 ներ, ուր Նարեկացիի վերագրուած տաղերուն,
 (մասնաւորապէս « Կէ. քասան » կտորներուն)
 հետ նմանութիւնը աւելի մտնիկ է. Նարեկացոյ
 վերագրուած այդ տաղերէն ոմանք յորինուած են
 մասնաւոր տաղաչափութեամբ մը՝ որուն համե-
 մատ իւրաքանչիւր տողի վերջին բառը յաջորդ
 տողին սկիզբը կը կրկնուի ու կը կապուի իրեն
 հետեւող բառերուն, զոր օրինակ,

Անունն անեղին Եիմ Աստուած է .
 Է վիշտ յէութեան յանթապութեան նոց .
 Նոյն ինքն է նրման նոյն մի և նոյն մի .

Մի ոմն ի յէից անդրէն ի նոյն բիւ .
 Թիւ միշտ եռակի եղեռակի փառ .
 Փառ իմ դիմառից էից գոյէից գուն .
 Գունդ տրամք երամից կայք . Եւն:

Միեւնոյն տաղաչափութիւնը կը դանկնը
 Շնորհալւոյ տաղերէն ոմանց մէջ . ահա՛ քանի
 մը տող « Ի սուրբ քառասունն » տաղէն, ուր
 լեզուն ա՛լ աւելի կը մտտեայ մեզ զբաղեցնող
 խորհրդաւոր տաղերու լեզուին .

Նոր իմն է հինիւն ընթերակաց երգոյ,
 Իր ներտաղական յոգնատեղեան Բախան.
 Բախան պանծալի բազմերանեան քառաս-
 նաթիւ Սբոյց .

. . . Գեղդին միայնոյ Թիւ քառասոց բոտ
 եղակացն ի Սմա .
 Ի Սմա տեսանի խորհուրդ սրբեալ աւուրց
 տասանց փառից .
 Քառասնից սրբոց գունդ գուժարի Այսօր,
 Այսօր վիմարիի դէմ Բեթիար Թամին,
 Իմացն անմաքրից մարմնոց սրբոց երկք յա-
 ճախեալ Աստուս .
 Աստուս պարարկին ի ծով լրճին սառնասա-
 ուոյց Սուգմամբ .
 Սուգմամբ ծովայնոյ սգ դառնաշունչ հիւսի-
 սայինն Ռոտ .
 Ռոտ տարափման յանդիւրպկան վայրքն
 անձկով Իրծեալ, Եւն:

* * *

Այս բոլորէն որոշ եզրակացութիւն մը հո-
 նել գեռ կարելի չեմ նկատեր . կը շատանամ
 նկատողութիւններս ենթարկելով մասնազե-
 ներու քննութեանը . կրնամ միայն իմ « տպա-
 ւորութիւնս » յայտնել, որ է՝ ամբողջով մին-
 չեւ ջարդ քառաներս՝ հետեւեալը . Նարեկացիի
 վերագրուած տաղերը Նարեկացիի գրչէն ելած
 չեն թուի. միեւնոյն հեղինակի դործ չեն . այն
 տաղերը որ ժողովրդական դրոշմ ունին, գրա-
 բարի աշուղական երգերն են, հեղինակը կամ
 հեղինակներն առ այժմ անծանօթ, (քայ ի « Հա-
 իկոյն » որուն հեղինակն է Արիստակէս) . Յայն-
 ևս քան տաղը (Աւետիս մեծ խորհրդոյ) Շնոր-
 հալիինն է (ըստ Փարիզի ձեռագրին) . հաւանա-
 կան է որ Շնորհալիինն ըլլան նաեւ « Սեաւ եմ

գեղեցիկ», «էն միշտ էին անեղապէս ծնունդ», «Երկինքն ի յերկիրս» տաղերը, Թերեւս «Մը-
նընդեան տաղն» ու «Աչքն ծով» նալ : Մնաց-
եալները — անոնք որ լեզուն ճմոթկուած է
եւ համաձայնութիւնը՝ թնճուկ — Թերեւս վե-
րագրելի ըլլան Գրիգոր Մագիստրոսին(1) կամ
անոր հետեւողներէն մէկուն, կամ աւելի՛ նոյն
ինքն Շնորհալուոյ անճաշակ եւ օտարամոլ աշ-
կերաներէն ոմանց : Միակ տաղը որ կրնայ վե-
րագրելի համարուի նարեկացւոյն, «Քառաս-
նից» տաղն է, որու լեզուն իբրց ոճի նարե-
կացեալկան մաքրութիւն, վեհութիւն եւ ճոխու-
թիւն ունի, եւ որուն տաղերուն սկզբնատա-
սերն արդէն «Գրիգոր» անունը կը ձեւայնեն :
Ա. ԶՕՊԱՆԵԱՆ



Յեղական ոգիին



Ե՛րբ պիտի գաս. — ե՛րբ մեր գետնին ոյժքերէն,
Իբր յարութիւնն հողին խրմած շողերուն,
Պիտի պոռթկան շունչիդ բոցերն երկնապող .
Կամ մեր երկրին արին կաթող ո՞ր աստղէն,
Գու պիտ՛ ի՛շնես հրդեհել
Ձէնքի տըրմուղ ժողովուրդդ՝
Որուն սըրտէն դարերն յաւէտ խըմեր են
Թորգոմական արիւնն եւ ո՞ղջ պարպեր .
Որուն համար մեր պապերուն ոսկերոսին՝
Սարերէ սար սըրտըն՝
Բամին են լոկ դալներու :
Ո՞վ անդբանիկ Աստուածուհի՛, Իսկուհի՛,
Հայ ջըրերուն, կըրակներուն եւ կաւին,
Տե՛ս. — թու երկիրդ՝ որ մեր սերմին մայր ըրիր՝

(1) Բազմաթիւ Մագիստրոսի համբաւար եւ գերա-
նշանակալիս : Թողձ ին ետ .

Մտուղ փանա՛ Ժոյնալ՝ ձեեալ՝ աննոյժ ոգեալ յառեալ .
Իրագեկ խմեալ մանեալ՝ յարայնեալ խկոյն յանեալ .
Մանուկ մաննն նանեալ՝ դամիկեալ ըմպանգով յարեալ .

Այլազգներու խըժըքժանքին մասնըւած՝
Այսօր, աւա՛ղ, սուգ եւ արիւն կը բըխէ .
Իր կործանած քաղաքներուն վրայ լրտիկ
կը նրստի Կոստնիկ ողբումով .
Հողն՝ հերկըւած միայն սողոյ՞ն օձերուն՝
Իր աղտաղտուկ խաւերուն մէջ կը պահէ
Պաղլէղ՝ եւ իր սեւ տափերուն վրայ՝ ըբօզ .
Կը մընան մեր այգետասները՝ առանց
Շերտափակի, եւ կարանները՝ առանց
Հայրենական գինիին .
Եւ մեր խոյերն ըսպիտակ
Չըզբանելով խառնոցներուն մէջ առուոյտ՝
Նօթութենէ մոռնալն՝
Մըտուրներուն դէմ կը ջարդեն եղջիրներն :
Իսկ որդիները՞ թըլուտա
Կամ հեռացած հորենական երկրէն
Կո խառնակին ազգերու խորդ արիւնով,
Կամ նոյն երկրին ծոցին մէջ
Կը մեռնին լուծն ուսերնուն,
Ապրողներուն թողով մաս
Մերկացումն ո՞ղջ Հայութենէն, խորագումն՝
Որով կ'ըլլան իբարու գէմ թըշնամի
Եւ թըշնամւոյն դէմ ծառայ :
Ո՛չ մեր դաշտերն՝ եղած արեամբ ճախճախուս՝
Ո՛չ տանարներն ու պարիսպներ քարուքանդ
Զիրենք կըրնան զայրագնել :
Ո՛չ օտարին ծաղրանքն եւ ո՛չ անարգանք
Կ'արթննընեն իրենց հողոյն մէջ ընդարձ
Հըպարտութիւնն հայկական :
Կը ծառայեն եւ կ'ողբան
Եւ ողբալով ըստըրկութիւնն աւելի
Իրենց դէ՛ղքին կը յօրինեն վայելուչ . . .

Եկո՛ւր, եկո՛ւր. — ժամանակն ա՛յս է. — եկո՛ւր . . .
Ահա յեղէց մաս մ' աղինք՝
Գաղափարի, գուպարի մէջ՝ հալումալ՝
Ճամուռդ վըրայ կը սքօնէ
Իր արիւնին հետ նոր վարդեր, կապաններ . . .
Եկո՛ւր, եկո՛ւր. — եւ Մասիսի կատարէն
Դիւցազներու, Վըկաներու հոգիներ՝
Իբր աստղերու սերմնեան,
Տեղա՛ լուրը Իգութեան մէջ մեր երկրին .
Մեր սըրտերուն խորունկ խորքերը հոսէ՛
Արիւնք անբո՛ զոր չիթ առ չիթ ժողկցիցի
Վարդաններու ըզր՝ մայրաբար հեղափոխէ .
Եւ ըրէ՛ ԱՅՐԱՐՑ՝